

1. Նապլուսը Սիւֆարը չէ. Բրիտանեական քարոզութիւնը նոյն քաղաքին մէջ.

Յովհաննու Աւետարանին (Գ. 5) մէջ կը յիշատակուի Սամարացոց քաղաք մը՝ Սիւֆար անուն, մերձ այն կալուածին՝ զոր Յակոբ Նահապետ ընծայեց իր Յովսէփ որդւոյն, եւ հոն էր Յակոբի աղբիւրը եւ Յիսուս ճանապարհէն յոգնած՝ կը նստէր նոյն աղբիւրին վրայ, և ուր քիչ յետոյ Սամարացի կին մը գալով՝ էրը ջուր պիտի քաշէր, Յիսուս անոր հետ խօսեցաւ (անդ, 6-7):

Շատերը Նապլուսը կը նոյնացնեն Սիւֆարի հետ, բայց Եւսեբիոս և Յերոնիմոս Սիւֆարը կը գտնեն Նապլուսէն: Պորտոյի Անանուն ուխտաւորը Սիւֆէմէն հազար քայլ հեռի Քարիզիմի ստորոտը գտնուած Նապլուսէն դուրս կը գնէ մասնաւոր Սիֆար գիւղ մը ուրկէ եկաւ Սամարացի կինը Յակոբի ջրհորը: Անունը այս տեղւոյն՝ որ կը թուի թէ կը գտնուի ջրհորին անմիջական շրջակայքը, մեզ կը յիշեցնէ այժմու մէկ գիւղին՝ Ասֆարի անունը, համանուն աղբիւրովը, բայց այս անուն գիւղը մէկ քրիստէթը հեռի կը գտնուի Գեբաղ լեռան ստորոտը գտնուած Յակոբի ջրհորէն: Ասիկա կը համաձայնի Askarothի՝ որ կը գտնուի Եփրեմի երկրին «քարձուք»ը և En Sokhar աղբիւրին հետ, այն դաշտին մէջ՝ որ իր կանխահաս ցորենովը նշանաւոր հանդիսացած է. Ասֆարի դաշտ կը նշանակէ աս, որ Քարիզիմի և Գեբաղի առջեւ կը տարածուի արևելք: Յակոբի ջրհորին քով կառուցուած եկեղեցիին ձախ կողմը՝ Մատապայի քարտէսը բաժնուած կը ներկայացնէ Նապլուսը վերոյիշեալ տեղերէն. անա կը հասկցուի ուրեմն որ հիները գատ գատ տեղեր կը նկատէին Նապլուսը եւ Սիւֆարը: Ըստ Պոնիփակիոսի, Յակոբի ջրհորի եկեղեցիին մօտ շինուած էր վանք մը՝ ուր կային հարիւր կիներ. բայց իր օրով վանքը ու եկեղեցին քանդուած էին. Յակոբի ջրհորի մօտ կանանց վանքը շինուած էր յիշատակին այն Սամարացի կնոջ՝ որ հաւատաց Յիսուսի և որուն զաւակները նահատակուեցան և ինքն ալ բանտին մէջ մեռաւ: Լատին եկեղեցիին անոր տօնը կը կատարէ մարտ 20ին (Mislin, Հար. Գ. էջ 427):

Աւետարանէն սորվեցանք թէ Սամարացիք նոյն իսկ Փրկչին բերանէն լսեցին կենաց բանին քարոզութիւնը և շատերը հաւա-